# Նարեկ Սարգսյան

## Խորամանկ աղվեսը

Գայլը տեսնում է Աղվեսին, որն ինքն իրենից գոհ՝ հպարտ քայլում էր:

-Աղվե՛ս քույրիկ, այնպես ես քայլում, ասես դու՛ ես կենդանիների թագավորը,-ասաց Գայլն Աղվեսին:

-Եթե կենդանիները խելք ունենային, ապա ինձ կճանաչեին որպես իրենց թագուհի ու կընդունեին իմ գերազանցությունը: Բայց բոլորը հարգում ու պաշտում են Առյուծին, թեև Առյուծը կենդանիների համար ի՞նչ է արել, նրանց ի՞նչ օգուտ է տվել: Այ որ Առյուծի փոխարեն ընդունեին իմ հեղինակությունը, ճանաչեին ինձ որպես իրենց ղեկավար, ապա նրանց կյանքում շատ բաներ կփոխվեին դեպի լավ: Ես արմատական ռեֆորմներ կանեմ կենդանական աշխարհում, ու բոլորի համար լավ կլինի,-ինքնավստահ ասաց Աղվեսը:

-Ճի՞շտ ես ասում, Աղվե՛ս քույրիկ,-զարմացած հարցրեց Գայլը:

-Իհարկե, Գա՛յլ եղբայր,-պատասխանեց Աղվեսը:

-Բայց Առյուծը քեզանից ուժեղ է, ազնիվ ու համարձակ,-նկատեց Գայլը:

-Բայց Առյուծը չունի ամենակարևորը՝ խելքը: Առանց խելքի՝ ուժն ու համարձակությունն արժեք չունեն,-արհամարհանքով ու սեթևեթալով ասաց Աղվեսը:

Գայլը գնում ու Աղվեսի խոսքերը տարածում է կենդանիների շրջանում: Լուրը հասնում է Առյուծի ականջին: Վերջինս շատ է բարկանում Աղվեսի խոսքերի վրա ու հրամայում է նրան շտապ իր մոտ կանչել:

***

Աղվեսը գալիս է Առյուծի մոտ:

-Ողջու՛յն, արքա՛, ինչո՞վ եմ արժանացել Ձեր հրավերի պատվին:

-Բավական է, շողոքորթես, Աղվե՛ս, կենդանիներն ինձ ամեն ինչ պատմել են,-բարկացած ասաց Առյուծը:

-Ի՞նչ են պատմել, Ձե՛րդ գերազանցություն, մեր բոլորիս հպարտության աղբյուր,-զարմացած ձևանալով՝ հարցրեց Աղվեսը՝ ցույց տալով, որ ոչնչից տեղյակ չէ:

-Դու՞ չես գլուխ գովացել Գայլի մոտ, թե կենդանիները քո հեղինակությունը պիտի ընդունեն, և որ դու ռեֆորմներ կանես կենդանական աշխարհում: Բացի այդ էլ ասել ես, թե առանց խելքի ուժն ու համարձակությունն արժեք չունեն,-ասաց Առյուծը:

-Ա՛, հասկացա, այդ ամենը Գայլ եղբոր բերանից է դուրս եկել: Այդ սրիկան մեր զրույցը գլխիվայր է ներկայացրել,-հանգիստ ու ինքնավստահ ասաց Աղվեսը:

-Այդ ինչպե՞ս,-զարմացած հարցրեց Առյուծը:

-Առյուծ արքա՛, իրականում այսպես է եղել: Մի քանի օր առաջ տեսնում եմ Գայլին հպարտ ու իրենից գոհ քայլելիս, կատակով հարցնում եմ . <<Գա՛յլ,

եղբայր, ինչու՞ ես այդպես հպարտ ու ինքնագոհ քայլում, քեզ դրել ես մեր Առյուծ արքայի տեղը>>: Վերջինս էլ ի՞նչ պատասխանի, որ լավ լինի, Առյու՛ծ արքա: Ասում է . <<ես Առյուծից ինչո՞վ եմ պակաս որ: Չեմ

հասկանում, թե կենդանիները ինչու՞ են նրան թագավոր կարգել, ո՞ր արժանիքների համար: Ես ավելի շատ օգուտ եմ տալիս կենդանիներին ու բնությանը, քան Առյուծը>>: Պատկերացնու՞մ եք , տե՛ր արքա, դրա անամոթության ու անպատկառության վրա: Ես էլ հարցնում եմ

դրան . <<Գա՛յլ եղբայր, այդ ի՞նչ օգուտ ես տալիս կենդանիներին ու բնությանը, կարո՞ղ եմ իմանալ>>: Սա իմ հարցից բարկացավ ու ինձ սկսեց վիրավորել՝ ասելով . <<հիմար, չգիտե՞ս ինչ է, որ ես բնության մեջ

կատարում եմ սանիտարի դեր՝ ուտելով հիվանդ կենդանիներին, որպեսզի նրանց հիվանդությունները չտարածվեն մյուս կենդանիների շրջանում: Եթե ես չլինեի, բոլոր կենդանիները հիվանդություններից սատկած կլինեին: Բացի այդ էլ ես հետևում եմ, որ խոտակեր կենդանիների թիվը կտրուկ չմեծանա, թե չէ նրանք կոչնչացնեն բնության բուսական ծածկը: Դե ասա, հիմա՛ր Աղվես, ո՞ր կենդանին է այսքան օգուտ տալիս բնությանը և

կենդանական աշխարհին: Առյուծն իմ չափ օգուտ տված կա՞ կենդանիներին>>:

Տե՛ր արքա,-շարունակեց Աղվեսը՝ բարկացած ձևանալով,- այս ամենը լսելով, ես զարմանքից քար կտրեցի: Ինքս ինձ հարցնում էի, թե այդ անամոթին որտեղի՞ց այդքան լկտիություն, որ այդպես է արտահայտվում մեր արքայի մասին: Հետո երևի վախենալով, որ ես մեր զրույցի մասին տեղյակ կպահեմ Ձեզ, ինձանից առաջ է ընկել՝ մեր զրույցը նենգափոխել ու կենդանիների շրջանում տարածել, թե իբր ես եմ այդ ամենն ասել, որպեսզի լուրը Ձեզ նման ձևով տեղ հասնի:

Աղվեսն այնքան համոզիչ էր խոսում, որ Առյուծն սկսեց հավատալ նրան:

-Ճի՞շտ ես ասում, Աղվե՛ս քույրիկ,-տարակուսած հարցրեց առյուծը:

-Իհարկե, տե՛ր արքա: Դրան կանչեք այստեղ առերեսման, թող իմ ներկայությամբ ասի, որ ես այդպիսի բաներ եմ ասել:

Առյուծը կանչում է Գայլին՝ աղվեսի հետ առերեսման:

***

Գայլը սաստիկ վախենում է, որ Առյուծն կանչել էր իր մոտ: Բայց ճար չունենալով՝ ներկայանում է:

Նկատելով Գայլի շփոթվածությունն ու վախը՝ Աղվեսը բացականչում է .

-Անամոթ, այդ ի՞նչ ստեր ես տարածել: Դու ամոթ ունե՞ս:

Գայլն Աղվեսի խոսքերից ավելի է շփոթվում, սառը քրտինքը հոսում է ճակատից:

-Տեսնու՞մ եք, արքա՛, թե այս անամոթը ինչպե՞ս է վախից դողում, եթե արդար է, ապա ինչու՞ պետք է այսպես վախենա,-դիմեց Առյուծին Աղվեսը:

-Գայլ, Աղվեսը ճի՞շտ է ասում,-բարկացած հարցրեց Առյուծը:

-Տե՛ր արքա,-սկսեց դողալ ու կմկմալ Գայլը,- Աղվեսին մի՛ հավատացեք: Նա խաբում է . . .

Առյուծի առջև կանգնած էր Աղվեսը՝ հանգիստ, ինքնավստահ շարժուձևով, ու Գայլը՝ սարսափած ու դողալով: Առյուծը որոշեց, որ Աղվեսն է ճիշտն ասում, քանի որ նա շատ հանգիստ էր, ինքնավստահ ու համոզիչ էր խոսում:

-Լսիր, Գա՛յլ,- ասաց Առյուծը,- ես քեզ հիմա այստեղ կարող եմ սատկացնել, բայց չեմ անում, որովհետև քեզ խղճում եմ: Կորի՛ր այստեղից ու այլևս աչքիս չերևաս, առավել ևս՝ չհամարձակվես նման բաներ ասել:

Գայլը սարսափած փախավ անտառի խորքը, Աղվեսն էլ, քմծիծաղ տալով, վերադարձավ իր բույնը: